Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Պ-297-25.09.2019-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

	Առաջարկության, (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջար-կությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1	Աժ պատգամավոր Արտակ Մանուկյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդված 1-ին մասը շարունակել հետևյալ նոր նախադասությամբ՝ «Քաղվածքում ներկայացվում են, նաև էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ջերմային էներգիայի արտադրության կամ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզիա ստանալու համար դիմող իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում 10 տոկոսից ավելի մասնաբաժին ունեցող անձանց վերաբերյալ տեղեկությունները.»:	Ընդունվել է	Ընդունվել է
2	Աժ պատգամավոր Արտակ Մանուկյան	Նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրից հանել «փոփոխություններ և» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
3	Աժ պատգամավոր Արտակ Մանուկյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով լրացվող կետն «իրական» բառից առաջ լրացնել «15.1.» թվով:	Ընդունվել է	Ընդունվել է
4	Աժ պատգամավոր Արտակ Մանուկյան	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասով լրացվող 2.1-ին մասում «սույն օրենքի» բառերը փոխարինել «սույն հոդվածի» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է

5	ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի համարակալումը հանել, քանի որ ներկայացված հոդվածով կատարվում է միայն մեկ լրացում:	Ընդունվել է	Ընդունվել է
6	ՀՀ կառավարություն	Նախագիծ	Նախագծում, այդ թվում՝ որպես համապատասխան պարտավորության խախտման համար պատասխանատվություն կիրառող, նշված է լիազոր մարմին, որպիսին, օրենքի տրամաբանությունից և իրավասությունների շրջանակից ելնելով, կարող է հանդիսանալ հանձնաժողովը: Ուստի, տարընկալումներից խուսափելու նպատակով անհրաժեշտ է նախագծում ***«լիազոր մարմին»*** բառերը և դրանց բոլոր հոլովաձևերը համապատասխանաբար փոխարինել «***հանձնաժողով***» բառով և դրա համապատասխան հոլովաձևերով (կրճատ անվանումը որպես հասկացություն սահմանված է օրենքով):	Ընդունվել է	Ընդունվել է
7	ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում «4-րդ հոդվածը լրացնել 15.1-ին կետով» բառերն առաջարկում ենք փոխարինել «4-րդ հոդվածում լրացնել նոր՝ 15.1-ին կետ» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը: **Նույն առաջարկը վերաբերելի է Նախագծի մյուս հոդվածներին՝** Հոդված 2, Հոդված 3, Հոդված 4:	Ընդունվել է	Ընդունվել է
8	ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան	Նախագծի 5-րդ հոդված	Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ. «1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի մարտի 1-ից:»	Ընդունվել է	Ընդունվել է

9	ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան	Նախագծի 5-րդ հոդված	Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասի նախադասության վերջում գրված «մինչև 2020 թվականի հունվարի 1-ը» փոխել հետևյալ բառերով՝ «մինչեւ 2020 թվականի հուլիսի 1-ը»	Ընդունվել է	Ընդունվել է
10	ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան	Նախագծի 5-րդ հոդված	Նախագծի 5-րդ հոդվածում ավելացնել նոր 3-րդ կետ. «3. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ջերմային էներգիայի արտադրության կամ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզիա ստացած անձինք պարտավոր են իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածքը հանձնաժողով են ներկայացնում եռամսյա ժամկետում:»	Ընդունվել է	Ընդունվել է